# Ժողովուրդ

Հասցեն՝ Երևան, Աբովյան 22/ա
Հեռախոս/ֆաքս. 010 54 64 23
Կայք՝ www. armlur.am
Էլ փոստ info.armlur@gmail.com
info.zhoghovurd@gmail.com

armavir@mta.gov.am

Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանին

«Ժողովուրդ» օրաթերթի լրագրող

Տաթև Հարությունյանից

Հարցում

Հարգելի' պարոն Ղահրամանյան,

«Բաղրամյան» գյուղի հիվանդանոցի գլխավոր բժիշկ Գագիկ Հարությունյանը հայտարարել է, որ Դուք անհարկի խոչընդոտել եք նրա՝ աշխատանքի վերականգնվելու հարցում, թեև մինչև 2017թ պայմանագիր կա Գագիկ Հարությունյանի հետ, և ըստ օրենքի՝ իրավունք չունեն նրան չվերականգնել աշխատանքում: Հիշեցնենք, որ գլխավոր բժիշկը մոտ 1,5 տարի կալանավորված է եղել թմրանյութ ապօրինի ձեռք բերելու, պահելու և իրացնելու մեղադրանքո, այնուհետև արդարացվել:

Պարոն Ղահրամանյան, Ձեր կարգադրության համաձայն, այսօր Գագիկ Հարությունյանն ազատվել է պաշտոնից եւ լուծվել է վերջինիս հետ կնքված աշխատանքային պայմանագիրը զբաղեցրած պաշտոնից չհամապատասխանելու հիմքով:

Խնդրում ենք պատասխանել մեր հետևյալ հարցին.

Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը այն հարցի շուրջ, որ Գագիկ Հարությունյանը դիմել է Վարչական դատարան՝ վիճարկելով Ձեր վերոնշյալ կարգադրությունը, որով հնարավոր է ինքնին կասեցվի վարչական ակտի կատարումը: Գլխավոր բժիշկը Ձեր կարգադրությունը կվիճարկի նաև վերադասության կարգով ՀՀ վարչապետին: Արդյո՞ք Դուք հաշվի չեք առել «Աշխատանքային օրենսգրքով» սահմանված չափանիշները:

Խնդրում ենք պատասխանել հնարավորինս սեղմ ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն:

Տաթև Հարությունյան

01.04.2015թ

ՀՀ ... Մուտք թիվ 3749-15
01 04 2015թ.